ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Տարբերակված ուսուցումը որպես ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների առաջադիմության բարձրացման միջոց

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Անուշ Բարսեղյան

ԴՊՐՈՑ՝ Այրքի Ալեքսանդր Փափախչյանի անվան միջնակարգ դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Փորձարարական հետազոտություն_____10

Խմբի նկարագիր_____10

Հետազոտության ընթացք_____11

Փորձարարական դաս 1_____12

Փորձարարական դաս 2_____12

Տվյալների մշակում և վերլուծություն_____14

Եզրակացություն_____17

Օգրագործված գրականության ցանկ_____18

Հավելված

Դասապլան 1

Գործնական աշխատանք

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր բարոյական
պարտականությունն է

Յուրաքանչյուր երեխայի
հնարավորինս

Լավագույն կրթություն տալը

Դեսմոնդթութու

Որն է մեր առաքելությունը. կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական քաղաքացի,որոնք հասկանում են , որ բոլորը, իրենց տարբերություններով հանդերձ , կարող են նույնպես իրավացի լինել։

Կարծում եմ բոլորս էլ գիտենք,որ այժմ հասարակական — պետական պահանջ է առաջացել սովորեցնել ու բոլորին և ապահովելու յուրաքանչյուրի կրթական նպատակների իրականացման հնարավորություն՝ պահպանելով նրա անհատական առանձնահատկությունները։

Գաղտնիքչ է , որ մեր դասավանդած ցանկացած դասարանում կա նուսումնական դժվարություններ ունեցող շատ երեխաներ։ Իսկ ո՞րն է դրա պատճառը։ Տարիների ընթացքումաշակերտներիմի մասը հարկադրաբար աշխատում է իր հնարավորություններից ցածր արդյունավետությամբ, որը, մեղմ ասած,բավարար հնարավորություն չի տալիս նրա ընդհանուր զարգացմանը։Մյուս մասը ստիպված է ամեն անգամ հին նյութը լիակատար չյուրացրած, կիսատ թողնելով անցնել հաջորդին։

Այսպես, աստիճանաբար կուտակվում է չյուրացված նյութը և հասնում մի աստիճանի , որ այլևս աշակերտը անկարող է շարունակել հետագա ուսումնառությունը, և այն ինքնստինքյան դառնում է անհետաքրքիր և անհրապուրիչ։Աշակերտը այլևս չի ուզում սովորել, չի կարող։

Արդյունքում սովորողների միայն մի մասն է ստանում իր համար նպաստավոր պայմաններ՝ աշխատելու համապատասխան /իրկարողությունների/ արդյունավետությամբ։

Հարց է ծագում. արդյո՞ք հասարակության յուրաքանչյուր անդամ ի վիճակի է որակով յուրացնելու սահմանված կրթության բովանդակությունը:

Անառարկելի է , որ բոլոր երեխաները տարբեր են: Նրանք տարբերվում են իրենց ընդունակություններով ,մտածելակերպով, ունեցած գիտելիքներով, հոգեբանական առանձնահատկություններով, գործունեության ձեռք բերած եղանակներով և այլն:

Սակայն սա ամենևին չի նշանակում ,որ երեխաների մի մասը կարող է սովորել, մյուսը՝ ոչ: Իհարկե , նրանք բոլորը գիտնականներ չեն դառնալու, հանրակրթությունը այդնպատակըչի էլ հետապնդում, սակայն բոլորը կարող են յուրացնել մարդկության՝ իբրև ուսումնական նյութ ձևակերպած փորձը:

Այսպես, երբ ուսումնական նյութի ուսուցումը կազմակերպվում է բոլորի համար նույն ձևով և նույն միջոցներով, նույն ուսուցչի կողմից, ապա արդյունքում ոչ բավարար մակարդակով յուրացումը ոչ թե ուսուցչի կամ ուսուցման մեթոդի գործոնով է պայմանավորված, այլ սովորողի անհատական առանձնահատկություններով:Խնդիրը հետևյալն է, աշակերտներից յուրաքանչյուրին ինչպիսի հնարավորություններ են տրվում ուսումնական գործընթացում օգտագործել իր յուրահատկությունները ներքի նանհատական միջոցները:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածները, տարիների ընթացքում միշտ առնչվելով այդ խնդրին ՝ես որոշեցի ստուգել արդյոք հնարավոր է **տարբերակված ուսուցմամբ բարձրացնել աշակերտների ուսումնառության արդյունավետությունը** հնարավորություն տալով նրանցից յուրաքանչյուրին ոսումնական գործընթացն ավելի գրավիչ և հետաքրքիր դարձնել:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու , կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ , հնարներ և ձևեր։Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնապատակ լինել չի կարող։ Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով։

Որպեսզի ուսումը արդյունավետ լինի, կարևորը ոչ թե այն է, ինչ երեխաները սովորում են, այլ այն, թե ինչպես են նրանք սովորում, և սա այն բանն է, որ մանկավարժները պետք է հաշվի առնեն իրենց երեխաների ուսումնական միջավայրը պլանավորելիս։

Սակայն մեթոդի ընտրությամբ և ռազմավարությամբ չի լուծվում ուսումնառության արդյունավետության ապահովման խնդիրը։Ուսուցիչներին մտահոգում է այդ հարցը , թե ինչպես կիրառել այդ գործիքները, դասի որ ձևաչափը, որ մոդելը կօգնի հասնել դրան։Յուրաքանչյուր ուսուցիչ , ելնելով իր փորձառությունից, գտնում է մի քանի ռազմավարություն ,համապատասխանեցնելով դրանք իր առարկային և իր աշակերտներին , տալիս այս հարցերի լուծումը։Սակայն այդ ամենի մեջ անփոփոխ է մնում մոտիվացիան, շահագրգռվածությունը, որը Ջեֆ Փեթթին որակում է որպես **արդյունավետ ուսումնառության նախապայման։**(Petty 2009 էջ 44)

Ռուս մեծ գրող Տոլստոյն ասում էր.<< Պահանջիր մարդուց այն , ինչ կարող է անել>> Այո, անմտություն է մարդուց պահանջել այն, ինչ չի կարող անել կամ այդ պահին ի վիճակի չէ անելու; Երբ սովորողի առջև դրվում են մեծ խնդիրներ հաղթահարելու համար, և նա վստահչէ, որ դա կարող է անել, առաջանում է հիասթափություն և անվստահություն իր ուժերի նկատմամբ, և սովորողը հետզհետե կորցնում է սովորելու ցանկությունը։ Որպեսզի աշակերտը հավատա իր ուժերին և ցանկություն ունենա սովորելու, պետք է նրան այնպիսի առաջադրանքներ տրվեն, որպեսզի պահպանեն ուսման ծարավը։(Журавлева,2006,էջ 291) Հայտնի հոգեբան Դ. Քարնեգինն(<<Ինչպես ձեռք բերել բարեկամներ>>1991) ասում էր հնարավոր չէ մարդուն անել տալ մի բան իր կամքին հակառակ ։ Աշակերտին պետք է համոզել, որ նա կարող է դա անել, որպեսզի կարողանանք հասնել արդյունքի։Այսպիսի հնարավորություն տալիս է տարբերակված ուսուցումը։

Իսկ ի՞նչ է տարբերակված ուսուցումը ։Դա ուսուցչի կողմից միևնույն բովանդակությունը մատուցելիս տարբեր ռազմականությունների և բազմաստիճան առաջադրանքներիկիրառումն է հաշվի առնելով յուրանքնաչյուր աշակերտի կարողությունների մակարդակը։ Տարբերակման միջոցով ուսուցիչը կարող է ուսումնասիրել և գնահատել սովորողների կարծիքներն ու դժվարությունները՝ բացահայտել նրանց խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը , հետաքրքրությունները որոնք կարող են օգնել ուսումնառության բարձրացմանը։ Այսինքն, տարբերակումն ու գնահատում փոխկապակցված գործընթացներ են ։ Գնահատմամբ ուսուցիչը համեմատում է աշակերտի նախնական և ուսումնառությունից հետո ձեռք բերած գիտելիքի առաջընթացի մասին։ Այնուամենայնիվ, բոլոր աշակերտները յուրօրինակ են, և նրանց կարիքները բխում են տարբեր պատճառներից, ինչպես օրինակ կարող է նրանց միջև լինել կրթական տարբերություն ։ Աշակերտները տարբեր դպրոցներ են հաճախել հիմնական, կամ բացակայել են կամ տարբեր աստիճանի ուշադրություն են դարձրել դասարանային և տնային աշխատանքներին։(Լիզ Բիլզը և Վալ Բրուկս,գլուխ 6)

Հաջորդ տարբերությունը կարող է լինել հոգեբանական։Ընդհանրապես ընդունված է աշակերտներին պիտակավորել <<ուժեղ>>,<<թույլ>>,<<բարձր>>,<<ցածր>>,<<միջին>> ընդունակություններ ունոցող տերմիններով ։Բայց այս բնութագրումները վիճակելի են, քանի որ մարդն իր մեջ կրում է բազմաթիվ կարողություններ, և դրանք դրսևորում են տարբեր իրավրճակներում տարբեր կերպով ։Ինչպես օրինակ յուր մարդն իր մեջ կրում է ազնվություն , նախանձ , չարություն , բարություն և այլն։Կախվածնրանցից,թե ինչ իրավիճակներում է մարդը ձևավորվել , զարգանում են դրան համապատասխան որակներ։Եթե ընտանիքը , միջավայրը նպաստել է չարության, թերարժեքության ,նախանձության ձևավորմանը , մարդը դառնում է դրանց կրողը , և այն դրական հատկանիշները ,որ կան նրա մեջ ,են մշակում։Եվ հակառակը։Այսինքն յուր մարդ ունի որոշակի ընդունակությունների և նրա ձևավորման , զարգացման ընթացքում ազդող գործոնները ընտանիքը ,դպրոցը, միջավայրը կարող են նրա ունակությունները զարգացնել կամ ընդհակառակը թուլացնել ։ՈՒղեղի սովորելու ունակությունը զարգանում է սովորելու ընթացքում , և աշակերտին տրվող բնութագրումները շատ հարաբերական են և կարող են հոգեբանական ճնշում գործել սովորողի վրա ։Այդ պատճառով ավելի ընդունելի է տվյալ պահին հաջող ուսումնառության արձանագրած սովորողին բնութագրոլ <<որպես բարձր առաջադիմություն ունեցող >>աշակերտ։Շատ

կարևոր է նաև հաշվի առնել ուսումնառության ոճի տարբերությունները։Դրանք տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ են ընկալվել։Այնուամենայնիվ , երկու հիմնական տարբերակումներն արվում են ամբողջական և վերլուծական , ինչպես նաև խոսքային և պատկերային մտածողություն ունեցող անձանց միջև Ռայդինգ և Ռիմա 1991։Սա նշանակում է , որ ամբողջական մտածողություն ունեցող , սովորողները նյութը ընկալում են

նրա մասին ընդհանուր պատկերացում կազմելով , իսկ վերլուծական մտածողություն ունեցողները մանրամասների ավելի մեծ պատկերի համատեքստում դիտարկելով ։Խոսքային մտածողության կրողները նյութը ավելի լավ ընկալում են լսելով , մինչդեռ պատկերային մտածողության կրողները նկարներով , գծապատկերներով ։Սովորողների միջև կարող են լինել նաև սոցիալական , մշակութային և գենդերային ։ՈՒսուցիչը պետք է հաշվի առնի այս տարբերությունները իր աշխատաքը ճիշտ կազմակերպելու համար։ԵՎ վերջապես սովորողը կարող է հատուկ պայմաններ պահանջող կրթական կարիքներ ունենալ ։Այսպիսիաշակերտներին առաջարկվում են անհաստականացված կրթական ծրագրեր ։ ՈՒսումնասիրելով վերը նշված տարբերությունները ուսուցիչը ամեն ջանք պետք է գործադրիորը սովորողնորին հնարավորություն տրվի աշխատի և առաջընթաց ապահովելու իրենցհնարավորություններին համապատասխան ։Պոտք է նպատակ դնել բոլոր աշակերտներինհասկանալի դարձնել բուն գիտելիքը , հմտություններն ու հասկացությունները ։Պիտիկարողանալ հասնել նրան , որ աշակերտների մեծ մասը յուրացնի լրացուցիչ նյութը , իսկ որոշաշակերտների համար հասանելի լինեն խորացված գաղափարներն ու հմտությունները։Այսիմաստով տարբերակումը կարելի է դիտարկել դասի բովանդակության, գործընթացների նարդյունքներիհամատեքստում ։Օրինակ տարբերակումըստ առաջադրանքների, երբաշակերտները օգտագործում են նույն ռեսուրսներ , սակայն կատարում են տարբերառաջադրանքներ ։Կարող են ռեսուրսները տարբեր լինել, իսկ աշակերտները կատարեննման առաջադրանքներ։
Տարբերակում կարող է լինել նաև ըստ ժամանակի նույն առաջադրանքի համար տալով կատարման տարբեր ժամանակահատվածներն ըստ օժանդակության,երբ սովորողներին կարող է տրամադրվել օժանդակություն ։Դա կարող է լինել դասի սկզբում , ժամանակ առ ժամանակ, որոշ դեպքերում էլ ամբողջ դասի ընթացքում ձեր օգնականների աշակերտների

կողմից։Կարելի է տարբերակել նաև ըստ արդյունքների երբ նույն առաջադրանքն է տրվում , բայց դրանք բաց են և տարբեր արդյունքների հնարավորություն են տալիս։

Տարբերակման նպատակն է տարբեր դասավանդման ոճերի կիրառումը՝ ապահովելու, որ աշակերտները կարողանան սովորել տարբեր ձևերով , բայց նույն կամ համանման արդյունքներով։Տարբերակումը նպատակ ունի խթանել ստեղծագործությունը՝ օգնելու աշակերտին ավելի ուժեղ կապեր հաստատել, հասկանալ հարաբերությունները և աբելի ինտուիտիվ կերպով հասկանալ հասկացությունները։

Տարբերակումը կարող է նաև փոխել , թե ինչպես է դասասենյակը կազմակերպվում։Աշակերտները կարող են բաժանվել խմբերի կամ առանձնանալ , եթե նրանք ընտրեն միայնակ աշխատել։

Տարբերակված ուսուցման առավելություններն են՝

- Տարբերակումն կարող է արդյունավետ լինել ինչպես բարձրահասակ աշակերտների, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձանց համար։
- Երեխաների ընտրանքը ապահովելը նշանակում է , որ նրանք ավելի շատ պատասխանատվություն են ստանձնում իրենք սովորելու համար։
- Ուսման մեջ ներգրավվածությունը ձգտում է ավելի ուժեղ լինել, քանի որ այն վերաբերում է երեխաներին, որպես աճի հավասար հնարավորություններ ունեցող անհատներ։

Տարբերակված դասավանդումը ունի նաև իր սահմանափակումները՝

- Տարբերակված ուսուցումը պահանջում է ավելի շատ դասի պլանավորման ժամանակ ուսուցիչների համար, որոնք արդեն իսկ կարող են ժամանակի մեջ ամրացնել։
- Այն կարող է պահանջել ավելի շատ ռեսուրսներ դպրոցի համար։
- Շատ դպրոցներ չունեն մասնագիտական զարգացման ռեսուրսներ, ֆակուլտետի պատշաճ կերպով պատրաստելու համար։

Հաշվի առնելով այս ամենը ՝ այնուամենայնիվ պետք է նշել, որ տարբերակված ուսուցումը կիրառելը ուսուցչի համար բավականին ծանր և աշխատատար աշխատանք է ։Այս դեպքում յուրաքանչյուր աշակերտի կարիքների հայտնաբերումը, ուսումնասիրումը , դասի պլանավորումը մեծ ջանք ու ժամանակ է պահանջում։Ավելացնենք նաև ,որ ըստ Կ .

Ա.Ժուժկովայի (<<Տարբերակումը դասավանդման գործընթացում>>)՝ տարբերակված ուսուցում կազմակերպելիս ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել ցածր առաջադիմություն ունեցողներին։

Այսպիսով, տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս մոտիվացնել(ըստ Ջեֆ Փեթթիի որակման՝ <<արդյունավետ ուսումնառության նախապայման >> է. Petty, 2009, pp 44), հետաքրքրություն առաջացնել ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին , որը շատ կարևոր է, և դասարանում ոչ մեկը չի մնում առանց առաջադրանքի։Նրանցից յուրաքանչյուրը հնարավորություն է ունենում իր մակարդակին համապատասխան առաջադրանք ստանալու և այդպիսով ապահովելու իր կարիքները ՝ ուսումնական պրոցեսն էլ ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար։

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի նպատակն է ստեղծել պայմաններ, որոնք հնարավորություն կտանտարբեր ուսումնական նախասիրությունների և անհատականությունների աշակերտներին իրենց ներդրումն ունենալ դասապրոցեսին: Այս նպատակին հասնելու համար պետք է լրացուցիչ քայլեր ձեռնարկել՝ խրախուսելու հանգիստ աշակերտներին բարձրաձայնել, և երբեմն խնդրել ավելի ակտիվ աշակերտներին զերծ մնալ մեկնաբանություններից՝ ուրիշներին հնարավորություն տալու համար:Պետք է հաշվի առնել նաև աշակերտների նախնական գիտելիքները նհարմարեցնել դասին՝ հիմնվելով այն բանի վրա, ինչ նրանք արդեն գիտեն:Աշակերտները իրենց հաջողակ կզգան և ավելի ներգրավված կլինեն, երբ նոր բովանդակությունը կապվի այն ամենի հետ, ինչ նրանք արդեն գիտեն: Շատ նպատակահարմար է աշակերտների համագործակցությունը: Նրանց համարհամատեղ աշխատելու հնարավորությունները կարող են հիանալի լինելներգրավվածության համար: Շրջվել և խոսելը հիանալի ռազմավարություն է, որտեղ աշակերտներին տրվում է քննարկման թեմա և ժամանակ՝ արագ շրջվելու և դասընկերոջ հետ քննարկելու համար:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտությունը կատարել եմ Այրքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում,որտեղ սովորում է 12 աշակերտ:Նրանցից 8-տղաներ են,իսկ 4-ը աղջիկներ:

Ինչպես բոլոր հանրակրթական դպրոցներում, այնպես էլ մեր դպրոցի 9-րդ դասարանում սովորում են առաջադիմության տարբեր մակարդակներ ունեցող աշակերտներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Ելնելով առարկայի առանձնահատկությունից՝ հաճախ են կազմակերպվում քննարկումներ և վերլուծություններ, ինչի շնորհիվ էլ ուշադրությունից դուրս են մնում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները: Վերջիններս, բնականաբար, ցանկալի առաջընթաց չեն գրանցում : Օգտվելով վերապատրաստման դասընթացի՝ ինձ ընձեռնված հնարավորությունից՝ որոշեցի տարբերակված ուսումնառության միջոցով հետազոտական աշխատանք կատարել՝ առաջադիմություն տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների առաջադիմության արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1.

Առաջին դասը, կարելի է ասել, ավանդական դաս էր՝ անհատական հարցումների մեթոդով: Բնականաբար, դասի ընթացքում մեծ ակտիվություն ցուցաբերեցին բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները: Մեծ ջանքեր էին պահանջվում՝ մյուս աշակերտներին դասապրոցեսին մասնակից դարձնելու համար: Դասը ամփոփելու և բոլոր աշակերտների գիտելիքները ստուգելու համար հանձնարարվեց անհատական գործնական աշխատանք, որի ժամանակ յուրաքանչյուր աշակերտ պետք է ինքնուրույն լրացներ
<<Պատմական հիշողության հինգ օղակներ>> գծակարգի յուչաքանչյուր օղակ: Աշխատանքը գնահատվելու էր՝ ըստ մակարդակների կազմված միավորային գնահատման սանդղակի:
Գործնական աշխատանքի արդյունքները՝ կից հավելվածում: Ինչպես սպասելի էր, արդյունքում չապահովվեց բոլոր աշակերտների առաջադիմության բարձրացումը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2.

Այդ դասին որոշեցի անցկացնել տարբերակված ուսուցում՝ կատարելով խմբային աշխատանք հայոց պատմություն առարկայից (Թեմա՝ <<Խորհրդային վարչակարգի հաստատումը>>): Առաջնային նպատակը հայոց պատմության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն էր, որը կապահովի աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին, կխթանի պատասխանատվության զգացումի սերմանումը և պետության միասնության կարևորության գիտակցումը, ինչն էլ իր հերթին կնպաստի առաջընթացի ապահովմանը և հնարավորություն կստեղծի գնահատական տալ այսօրվա ներքաղաքական անկայունությանը:

Երբ գրատախտակին գրեցի <<Զանգեզուր>>,<<Նվագախմբի տղաներ>>,<<Սարոյանեղբայրներ>>հասկացությունները և առաջարկեցի աշակերտներին կապ գտնել այդ բառերի և այդ օրվա դասի միջև, գրեթե բոլոր աշակերտները հնչեցրին հետաքրքիր պատասխաններ
:

Այնուհետև, ելնելով աշակերտների կարողություններից, դասարանը բաժանեցի երեք խմբերի: Այդ ժամանակ եղան դժգոհություններ, քանի որ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները ունեին խմբում ամբողջ աշխատանքի պատասխանատվությունը կրելու , ինչո՞ւ չէ, նաև ձանձրանալու մտավախություն : Սակայն, յուրաքանչյուր խմբին բաժանեցի հայտորոշիչ հարցեր և առաջադրանքներ, որոնք կազմված էին ըստ մակարդակի:

Մակարդակ 1.
Կազմել ժամանակագրականաղյուսակ և բացատրել բոլոր հասկացությունները

Մակարդակ 2

m-ձև աղյուսակի միջոցով վեր հանել քաղաքացիական պատերազմի պատճառները, ընթացքը և հետևանքները

Մակարդակ 3

Լրացնել Վեննի դիագրամը՝ համեմատելով Արամ Մանուկյանի և Ալեքսանդր Մյասնիկյանի կերպարները։

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացված էր իրենց առաջադրանքների վրա , քանի որ բոլորն ունեցան համապատասխան աշխատանք , իսկ բարձր առաջադիմություն աշակերտներն էլ չձանձրացան , քանի որ ունեցան համեմատելու և վերլուծելու հնարավորություն։ Խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու դարձավ ընկերների համար, փորձեց օգնել ընկերոջը՝ ընկալելու նյութը։Սովորողները կարողանում էին նկատելմիմյանց սխալները և կատարում էին փոխադարձ շտկումներ, որովհետև խմբային աշխատանքի ժամանակ ինքնավստահությունը մեծանում է։ Արդյունքն էլ եղավ աշակերտների ակտիվության և անգամ նյութը ընկալելու արդյունավետության բարձրացումը։ Այդ արդյունքը տեսանելի էր հաջորդ գործնական աշխատանքի ժամանակ։(Արդյունքները՝ կից հավելվածում)

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ինքս ինձ ուղղված այսպիսի հարցերի միջոցով վերլուծեցի հետազոտությունից ստացված արդյունքները:

Ի՞նչը լավ ստացվեց:
Աշակերտները լիովին ընդգրկված էին դասին :Սովորողները կարողանում էին նկատել միմյանցսխալները և կատարում էին փոխադարձ շտկումներ:Բանավոր ներկայացման ժամանակ աշակերտները ցուցաբերեցին ակտիվություն:Դասի ընթացքում օգտագործվեց մի քանի գծագիր, աղյուսակ:Խմբի յուրաքանչյուր անդամ զբաղված էր, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իրեն հասանելի , իր առանձնահատկությունները հաշվի առնված տարբերակված առաջադրանք;Խմբում բոլորը օգնում էին միմյանց:

Ի՞նչն անակնկալի բերեց ինձ:
Դժգոհություններ եղան խմբերը կազմելու ժամանակ

Ի՞նչը պլանավորածի պես չստացվեց:
Դասը չտեղավորվեծ ժամանակի մեջ

Ի՞նչը կփոխեի:
Կաշխատեմ դասը տեղավորվել ժամանակի մեջ:Չնավորող գնահատման փոխարեն կարելի է օգտագործել միավորային գնահատում , էլ ավելի ոգևորելու համար:

Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից:
Աշակերտները հասկացան խորհրդային վարչակարգի կառուցվածքը:Հասկացան ,որբռնի ուժով հաստատված վարչակարգը անհետևանք չի մնա:Ծանոթացան մեր պատմության նոր դերակատարների հետ:Մեկնաբանեցին հայ մեծ բանաստեղծ Հ.Թումանյանի այն միտքը ,որ ներազգային պայքարը բախտախնդիրների գործ է՝կապելով այն մեր օրերի հետ:

Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա:
Ամփոփելով խմբերի աշխատանքը՝հասկացա ,որ աշակերտները ըստ իրենց ընդունակությունների ընկալման կատարել էին իրենց առջև դրված խնդիրները :

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում:Դա աշխատե՞ց:
Տարբերակված ուսուցման միջոցով բարձրացնել աշակերտների առաջադիմությունը: Կարծում եմ հասա նպատակիս:Սովորողների ուշադրությունը ավելի կենտրոնացավ, նկատվեց ոգևորություն,քանի որ բոլորը ունեին համապատասխան աշխատանքև ուժեղներն էլ չէին ձանձրանում՝ունենալով ավելի բարդ առաջադրանքներ:

Նշված սանդղակով գնահատել եմ գործնական աշխատանքները

Գնահատման միավորները

Փաստը լրացումներով գրելու դեպքում	3-4 միավոր
Ո՞վ/ի՞նչ լրացումներով գրելու դեպքում	4-5 միավոր
Փաստը, Ո՞վ/ի՞նչ և Հիմնախնդիրները գրելու դեպքում	5-6 միավոր
Փաստը, Ո՞վ/ի՞նչ ,Հիմնախնդիրները և Լուծումները ամբողջությամբ գրելու դեպքում	7-8 միավոր
Փաստը, Ո՞վ/ի՞նչ ,Հիմնախնդիրները ,Լուծումները և Պատմական փոփոխություններն ու եզրակացությունները գրելու դեպքում	9-10 միավոր

Ելնելով գնահատման այս սանդղակով աշակերտների ստացած միավորներից՝ ստանում ենք հետևյալ գրֆիկը:




4
5
6
7
8
9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով հետազոտության խնդիրների ընթացքում կատարված դիտարկումների վերլուծություններից,եկել են եզրահանգման:

- Ստանդարտ դասապրոցեսում հիմնականում քիչ թե շատ աշակերտները պարտաճանաչ կատարեն առաջադրանքները ,իսկ տարբերակված հարցադրումների շնորհիվ յուրաքանչյուր սովորող ունենում է իրեն հասանելի , իր առանձնահատկությունները հաշվի առնված տարբերակված առաջադրանք:Արդյունքում աշակերտը չի վախենում զույգում կամ խմբում սխալվելուց, կարողանում իր սխալների ուղղումը կատարել ընկերների պատասխաններից ելնելով: Զույգերով կամ խմբային աշխատանքի դեպքում, սովորողը ավելի ինքնավստահ էդառնում :
- Խմբում կամ զույգում յուրաքանչյուր աշակերտ պատասխանատու է դառնում մյուսի համար, փորձում է օգնել ընկերոջը ընկալելու նյութը, խրախուսում նյութի ներկայացման ժամանակ:
- Աշակերտը ավելի ուշադիր է , քանի որ յուրաքանչյուրը ունի համապատասխան առաջադրանք , բարձր առաջադիմության աշակերտները էլ չեն ձանձրանում ,քանի որ ունեն վերլուծելու և քննարկման համար նախատեսված առաջադանքներ:
- Տարբերակված ուսուցման միջոցով հնարավոր է դառնում բարձրացնել աշակերտների առաջադիմությունը:
- Հիմք ընդունելով հետազոտական դասերի արդյունքները, համոզվեցինք ,որ որքան էլ տարբերակված ուսուցման միջոցով բարձրացավ սովորողների առաջադիմությունը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ տարբեր դասարաններում , տարբեր առարկանների, ուսուցիչների տարբեր մոտեցման արդյունքում, հնարավոր է արդյունավետության ցուցանիշների տարբերություն:

Անհատների միջև տարբերություններն ազդում են նրանց ուսումնառության վրա, ինչպես նաև որոշ մոտեցումներ, որոնք ի պատասխան այս տարբերությունների՝ օգտագործվում են ուսուցիչնեչի կողմից:Անհատական տարբերություններին արձագանքելն, ըստ երևույթին, ուսուցչական դերի ամենաբարդ ոլորտներից է և լուրջ վերաբերմունքի պարագայում մարտահրավերների տեղիք է տալու ձեր ողջ կարիերայի ընթացքում:(Լիզ Բիլզ և Վալ Բրուկս , գլուխ 6 <<Տարբերակման կիռումն ուսումնառության խթանման համար>>:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Petty,G. Teaching todey.4 ed, London , 2009. CH 5 Motivation 44-64

2.Լիզ Բիլրզը և Վալ Բրուկսը<<Preparing to Teach in Secondary Schools A STUDENT TEACHER'S CUIDE TO PROFESSIONNAL ISSUES IN SECONDARY EDUCATION>> 6 <<Using differentiation to support learning>>:

3.Ս.Խաչատրյան , Կամուրջներ պատերի փոխարեն,Անտարես , Երևան , 2014թ:

4.Ս. Խաչատրյան , Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան ,2020:

5.Собина Т. А.<<Индивидуальная образовательная траектория-образовательная программа ученика>> Сборник научно-методических и инструктивных материалов:

6.Методика А.Г.Ривина. Способ организации парной работы в школе.7.Джефф П

етти <<Современное обучение>>:

8.Դեյլ Քարնեգի <<Ինչպես ձեռք բերել բարեկամներ.>>

9.Կ. Ա.Ժուժկովա , <<Տարբերակումը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում>>:

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Անուշ Բարսեղյան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 9-րդ դասարան

Ամսաթիվ՝ 05.02.2022Թ.

Թեմա՝	Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովումն Սևրի պայմանագիրը
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, քարտեզներ,նկարներ
Հիմնական հասկացություններ	Հայկական հարց,մանդատ,իրավարար վճիռ,Ազգերի լիգա,Արևելյան լեգեոն,ազգային պատվիրակություն, ինքնավարություն
Դասի նպատակը՝	• Թվարկի Փարիզի խաղաղության կոնֆերանսի բացման ,Սևրի պայմանագրի կնքման ,Կիլիկիայի ինքնավարության հռչակման տարեթվերը։ • Իմանա Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածների ընդհանուր բովանդակությունը • Բացատրի հիմնական հասկացությունները • Վերլուծի Սևրի պատմական նշանակությունը, Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Կիլիկիայում և դրա ծանր հետևանքները • Սովորողի մեջ դաստիարակել հայրենասիրություն, ունենալ ազգային արժանապատվություն , որպես պահանջատեր ապագան կերտելու խնդրում • Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումըտեղի ունեցավ

Վերջնարդյունքները	**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել Հայաստանի հարաբերությունները Քառյակ դաշինքի երկրների հետ և հայկական պատվիրակությունների կազմը,Փարիզի խորհրդաժողովի հրավիրման ժամանակը, Հայկական հարցը ներկայացնող պատվիրակությունները և նրանց միջև առկա տարաձայնությունները: • Մեկնաբանել Հայաստանի հարաբերությունները նրա անմիջական հարևաններ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի հետ, • բացահայտել Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչման անհրաժեշտությունը, • վերլուծել <<Միացյալ և Անկախ Հայաստանի>> հռչակագիրը:

Գործողություններ (ժամ/տևողություն)	Պլանավորած ՈւԳռազմավարություններ	Առանցքայինհարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստումէ դասի նպատակին)
3 րոպե 25 րոպե	Աշակերտներին ակտիվացնելու համար և նախկինում ստացած գիտելիքները ստուգելու համար կատարել <<Մտագրոհ>> վարժությունը։Գրատախտակին գրել <<Հայկական հարց>> առանցքային բառը և առաջարկել աշակերտներին թվարկել այն ամեը ինչ գիտեն։Ուսուցիչը գրի կառնի այն ամենը ինչ կառաջարկեն աշակերտները առանց քննարկելու և մեկնաբանելու։ Որպեսզի աշակերտները իրենց պատկերացնեն մի իրավիճակում , որ լուծելու են բազմաթիվ հիմնախնդիրներ , որից կախված է Հայաստանի ճակատագիրը,ուսուցիչը դերային խաղի մեթոդի միջոցով, հանդես է գալիս Փարիզի վեհաժողովի նախագահի բացման խոսքով։ Համառոտ դասախոսությունից հետո դասարանին առաջարկվում է ներկայացնել դասը ,նրավորություն տալով աշակերտներին կարդալ դասը։ Հիմնվել ուսուցչի կողմից առաջարկված հարցերի շուրջ՝ 1.Հայկական պատվիրակությունների Փարիզի վեհաժողովում 2.Սևրի պայմանագիրը 3.Կիլիկիահայության աղետը Աշակերտների գիտելիքները ստուգելու	: 1. Ե՞րբ սկսվեց Փարիզի խաղաղության խորհրդաժողովը։ 2. Հայկական ի՞նչ պատվիրակություններ էին մասնակցում խորհրդաժողովին։ 3. Ո՞ր երկրին էր նախատեսվում հանձնել Հայաստանի մանդատը։ 4. Ե՞րբ է ստորագրվել Սևրի պայմանագիրը և ըստ Սևրի պայմանագրի որքա՞ն էր կազմում ՀՀ տարածքը։ 5. Ե՞րբ հռչակվեց Ինքնավար Կիլիկիան։ -

15 բոպե	համար հանձնարարել գործնական աշխատանք ։ Լրացնել<< պատմական հիշողության հինգ օղակներ>> գծակարգը։	
Գնահատում	Գծակարգերով գործնական աշխատանքները գնահատել ըստ մակարդակների Այսպես՝ <<Փաստ>> օղակը լրացնելու դեպքում աշակերտը կգնահատվի 4 միավոր, <<Փաստ,Ո՞վ/Ի՞նչ>> դեպքում՝ 5 միավոր, <<Փաստ,Ո՞վ/Ի՞նչ , Հիմնախնդիր>>-ի դեպքում՝ 6 միավոր , <<Փաստ,Ո՞վ/Ի՞նչ , Հիմնախնդիր ,Լուծումներ>>-ի դեպքում՝7-8 միավոր , իսկ բոլոր օղակների դեպքում՝ 9-10 միավոր	
Տնային հանձնարարություն	Կրկնել ուսումնասիրված նյութը	

Գործնական աշխատանք

Թեման- Սևրի պայմանագիրը

Լրացնել պատմական հիշողության հինգ օղակները։

2.Ո՞վ/ի՞նչ

3.Հիմնախնդիրներ

1. Փաստ

5. Պատմական փոփոխություններ և եզրակացությ

4.Լուծումներ

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Անուշ Բարսեղյան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 9-րդ դասարան

Ամսաթիվ՝ 07.02.2022թ.

Թեմա՝	Խորհրդային վարչակազմի հաստատումը
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, քարտեզներ,նկարներ
Հիմնական հասկացություններ	Հայկական հարց,մանդատ,իրավարար վճիռ,Ազգերի լիգա,Արևելյան լեգեոն,ազգային պատվիրակություն, ինքնավարություն
Դասի նպատակը՝	• Իմանա խորհրդային նոր մարմինների մասին, նրանց կողմից ձեռնարկված առաջին քայլերի մասին • Բացատրի <<Ռազմական կոմունիզմ>> քաղաքականության էությունը,դրա հետևանքները։Բացատրի <<Չեկա>> ,<<ՀԿ/բ/Կ>>, <<ՀՓԿ>> հասկացությունները • Կարողանա հասկանա Հայաստանի խորհրդայնացման հետևանքով մեր երկրի և ժողովրդի կյանքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները։ • Վերհանի և վերլուծի քաղաքացիական ապստամբության և կռիվների պատճառներն ու հետևանքները
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել խորհրդային իշխանության մարմինների կազմավորումը, ԱԽԴՍՀ-ի կազմավորումը, փետրվարյան ապստամբությունը • բացատրել հեղկոմ, ռազմական կոմունիզմ, պարենմասնատրում տերմինները • հիմնավորել հեղկոմների դերը որպես իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններ, • վերլուծել փետրվարյան ապստամբության պատճառները, • գնահատել միասնության կարևորությունը և գնահատական տալ այսօրվա ներքաղաքական անկայունությանը	
Գործողություններ **(ժամ/տևողություն)**	**Պլանավորած ՈՒԳ ռազմավարություններ**	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
	Գրատախտակին ուսուցիչը գրում է	1. Ի՞նչ էին կոչվում օրենսդիր և

2-3 րոպե 10 րոպե 25 րոպե 5-7 րոպե	<<Զանգեզուր>>,<<Նվագախմբի տղաներ>>,<<Սարոյան եղբայրներ>>հասկացությունները և առաջարկում աշակերտներին կապ գտնել այդ բառերի և այդօրվա դասի հետ։Լսել աշակերտներին և լրացում անել։ Ուսուցիչը կարճ դասախոսությամբ ներկայացնում է դասի նպատակը և հիմնական բովանդակությունը՝ դուրս գրելով գրատախտակին նոր հասկացությունները։ Ելնելով աշակերտների կարողություններից դասարանը բաժանել 6 խմբերի ։Յուրաքանչյուր խմբին բաժանել հայտորոշիչ հարցեր և առաջադրանքներ ,որոնք կազմված են ըստ մակարդակի։ Մակարդակ 1. Կազմել ժամանակագրական աղյուսակ և բացատրել բոլոր հասկացությունները Մակարդակ 2 m-ձև աղյուսակի միջոցով վեր հանել քաղաքացիական պատերազմի պատճառները ,ընթացքը և հետևանքները Մակարդակ 3 Լրացնել վենի դիագրամ՝ համեմատելով Արամ Մանուկյանի և Ալեքսանդր Մյասնիկյանի կերպարները Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները։ Դասը առփոփվում է հետևյալ հարցով. արդյո՞ք հնարավոր էր խուսափել քաղաքացիական պատերազմից	գործադիր մարմինները։ 2. Ի՞նչ էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը և ի՞նչու այն կիրառվեց ։ 3. Քաղաքական ո՞ր նշանավոր գործիչները զոհ գնացին բռնաճնշումներին։ 4. Ո՞վ նշանակվեց Ժողկոմխորհի նախագահ։ 5. Ե՞րբ է տեղի ունեցել Փետրվարյան ապստամբությունը և ո՞վ է եղելՀայրենիքի փրկության կոմիտեի նախագահը։
Գնահատում	Ձևավորող գնահատում	
Տնային հանձնարարություն	Լրացուցիչ տեղեկություն Ալ. Մյասնիկյանի մասին	